



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԸ

Լրացավ Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրման 60-ամյակը:

«Էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարակվում է Վեհափառ Հայրապետի հունվար 1 թվակիր Հայրապետական կոնդակը, Հայկական բարեգործական ընդհանուր միության վաֆտունամյակի առթիվ:

Հայոց Հայրապետը, գեղեցկորեն բնութագրելով Հայկական բարեգործական ընդհանուր միության նպատակը, ոգին և գործունեությունը, գրում է.

«Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ծառայության և զոհաբերության ուժաւ մըն է..., հարազատութեն հայկական, նշմարտապես բարեգործական, համազգային իմաստով ընդհանուր, եղբայրական սիրով գոտեալինդ միություն մը»:

Կաթոսուն տարի առաջ, 1906 թվականի ապրիլին, նեղոսի ափին ծնունդ էր առնում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Պողոս նուպար փաշայի զինավորությամբ և մի շարք բարեսեր, հայրենասեր հայորդիների սրտագին քաջալերությամբ և մասնակցությամբ:

«Մեծատանց որ են յայսմ աշխարհի, պատուէր տացիր մի՛ հապատանալ և մի՛ յուսալ ի մեծութիւն սնոափ, այլ յԱստուած... զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան» (Ա. Տիմոթ. Զ 17—18):

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը նախապես կազմակերպվում էր Արևմտյան Հայաստանի գավառների հայության նյութական օժանդակություն անելու հայրենանվեր մտածումով:

Այնուհետև, սակայն, միությունը հայ ժողովրդի գլխին տեղացող թշվառությունների և բազմապիսի ծովացած կարիքների դիմաց, որդեգրում էր նաև եկեղեցական, կրթական և հայրենասիրական գործունեություն:

Վաթոսուն տարի շարունակ բարիք և օրհնություն եղավ նա հայ կյանքում, հասավ միության բարի և նախախնամական ձեռքը Սփյուռքում Հայ եկեղեցու կարիքներին, հայ գաղթական ժողովրդի զրկանքին, վշտին, հայ մշակութի, հայ զպրոցի մտահոգություններին, պետքերին:

Մեր ժողովուրդը ի բնե բարեսեր, առատաձեն. ժողովուրդ է: Նա միշտ իր «այրի կոնց երկու լումա»-ն սիրով տվել է եկեղեցու և ազգի կարիքների համար:

«Լաւ է տալն քան զառնուլն» (Գործք ի 35), իրապես հայկական, համազգային և միջարանվանական և զուտ մարդասիրական ոգով կազմակերպված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը մարմնացումն է մեր ժողովրդի քրիստոնեական գութի, հավատի, նրա աղնվագույն, մարդասիրական զգացմունքների և արտահայտու-

թյուններից մեկը միաժամանակ մեր համազգային միության:

Ոսկու դեղերի մոտ՝ ոսկի սիրտ, առողջ միտք և մարդասիրական վերաբերմունք հանրային-հասարակական պարտքի գիտակցությամբ: Ահա՝ նշմարիտ բարեգործությունը, որը գործունեության սկզբունքն է եղել Հայկական բարեգործական ընդհանուր միության:

Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության դաշտը ընդարձակ է, ոգին՝ անխտրական:

Այս իրապես մեծ ու պատվական միության անդամ են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական համայնքների զավակները:

Այս բարեգործական միությունը ծառայում է Հայ քրիստոնեական հավատին, մեր ժողովրդին, մշակույթին և Հայրենիքին:

Ահա թե ինչո՞ւ միության հիմնադրության առաջին իսկ օրից, Ամենայն Հայոց Հայրապետները, Խրիմյան Հայրիկից մինչև Վաղ-

գեն Ա, չերմորեն, սրտաբուխ զգացմունքներով, օրհնության կոնդակներով, կոչերով քաջակերել են Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը: Որովհետեւ, — «Այսպիսի միություն մը, — զրում է Վեհափառ Հայրապետը իր կոնդակում, կոչված է հավետ ապրելու, վասնզի ան կմարմնավորե հայ ծողովուրդի ապրելու, գոյտաևելու և ստեղծագործելու վալերական կերպերեն մին, ու կործե հայ ծողովուրդի հավերդության համար»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր անկեղծ հարգանքն ու սրտագին շնորհավորություններն է միացնում Հայկական բարեգործական ընդհանուր միության վաթունամյակի առթիվ արտահայտված համազգային երախտագիտության, հարգանքին և զերմորեն բարեմաղթում է նոր հաջողություններ:

«Գիտասչին, թէ իւրաքանչիւր ո՛վ որ զինչ առնել զբարին, զնոյն ընդունի և ի Տեառնի» (Եփես. Զ 8):

